Ագրոէկոլոգիան Հայաստանի բուֆերային գոտիներում

Բնության հատուկ պահպանվող տարածքները չեն կարող զարգանալ մեկուսացված վիճակում: Դիմակայուն բուֆերային գոտիները կարևոր են Հայաստանի կենսաբազմազանության, կլիմայի փոփոխությանը հարմարվողականության և գյուղական բնակավայրերի զարգացման համար:

Ի՞նչ են բուֆերային գոտիները

Բուֆերային գոտիները բնության հատուկ պահպանվող տարածքները, օրինակ՝ «Դիլիջան» ազգային պարկը, «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, «Արևիկ» ազգային պարկը և Սևանա լճի ավազանը շրջապատող լանդշաֆտներ են:

Այս գոտիները բնակեցված են գյուղական համայնքներով, որոնց գյուղատնտեսական և արածեցման գործելակերպերն անմիջականորեն ազդում են կենսաբազմազանության, անտառների և ջրհավաք ավազանների վրա:

«Դիլիջան» ազգային պարկին, «Խոսրովի անտառ» պետական արգելոցին, «Արևիկ» ազգային պարկին և Սևանա լճի ավազանին սահմանակից բնակավայրերը բախվում են էկոլոգիական և սոցիալ-տնտեսական աճող ճնշումների՝

- ջերմաստիճանի բարձրացում և երկարատև երաշտ,
- անտառների քայքայում և վառելափայտի ապօրինի դուրսբերում,
- կենդանիների գերարածեցման հետևանքով համայնքային արոտավայրերի դեգրադացիա և հողի էրոզիա,
- գյուղատնտեսական հոսքաջրերի ազդեցություն ջրային համակարգերի վրա,
- մարդ - վայրի բնություն հակամարտություն,
- գյուղական բնակավայրերից արտագաղթ:

Պահպանվող տարածքները չեն կարող մնալ էկոլոգիապես կենսունակ, եթե շրջակա լանդշաֆտները շարունակում են դեգրադացվել: Շրջակա միջավայրի պահպանության ներկայիս իրավակիրառ մոտեցումները բավարար չեն առանց գյուղական բնակչության կենսակերպի զուգահեռ վերափոխման:

Ի՞նչ է ագրոէկոլոգիան և ինչու՞ է այն կարևոր

Ագրոէկոլոգիան առաջարկում է համալիր լուծում՝ կենսաբազմազանության պաշտպանության ուժեղացում՝ միաժամանակ մեծացնելով գյուղական բնակավայրերի դիմակայունությունը և եկամուտները: Ագրոէկոլոգիան կարող է լինել հզոր ռազմավարություն արգելոցների և ազգային պարկերի մոտակայքում գտնվող համայնքների համար, հատկապես այնտեղ, որտեղ հատվում են կենսաապահովման միջոցների, բնապահպանական նորմերի, հողային իրավունքների և կլիմայական ռիսկերի հարցերը:

Ագրոէկոլոգիան ապահովում է բնության համար դրական այլընտրանք:

Ագրոէկոլոգիան էկոլոգիական սկզբունքները գյուղատնտեսությունում կիրառում է՝

- մշակաբույսերի և գյուղատնտեսական կենդանիների տեսակների բազմազանեցմամբ (դիվերսիֆիկացմամբ),
- հողի առողջության վերականգնմամբ,
- քիմիական նյութերի օգտագործման նվազեցմամբ,
- գյուղատնտեսական համակարգերում ծառերի ինտեգրմամբ,
- տեղական գիտելիքների և համայնքային կառավարման ամրապնդմամբ:

Ագրոէկոլոգիան համատեղում է կլիմայի նկատմամբ դիմակայունությունը, կենսաբազմազանության պահպանումը և գյուղական բնակավայրերի տնտեսական զարգացումը:

Առաջնահերթ լուծումներ Հայաստանի բուֆերային գոտիների համար



1. Լեռնային ագրոանտառտնտեսություն

- Մրգատու ծառերի և ընկուզավոր ծառատեսակների աճեցում գյուղատնտեսական մշակաբույսերի հետ համատեղ
- Փոշոտողների համար միջանցքներ
- Հողի կայունացում լանջերին
- Ածխածնի կլանում

Ազդեցությունը. Նվազեցնում է էրոզիան և ստեղծում բազմազան եկամտի հոսքեր:



2. Վերականգնողական արոտավայրերի կառավարում

- Ռոտացիոն արածեցման համակարգեր
- Կրկնացանք տեղական խոտաբույսերով
- Անտառային արոտավայրերի մոդելներ
- Ձմեռային կերերի արտադրություն

Ազդեցությունը. Նվազեցնում է դեգրադացիան և անօրինական արածեցումը արգելոցներում:

3. Վայրի բնության հետ համատեղելի գյուղատնտեսություն

- Բուֆերային մշակաբույսեր (անուշաբույր խոտաբույսեր, լավանդա)
- Մեղվանոցների ցանկապատեր՝ վայրի կենդանիների ներթափանցումը կանխելու համար
- Անասնապահական անվտանգ վանդակներ
- Բազմազան մշակաբույսերի համակարգեր

Ազդեցությունը. Նվազեցնում է փոխհատուցման ծախսերը և կոնֆլիկտները:



4. Ջրի և հողի պահպանում

- Ցանքաձածկույթի և կոմպոստի համակարգեր
- Եզրագծային տնկում և տեռասավորում
- Ջրի փոքրածավալ հավաքում
- Սևանա լիճ հոսքաջրերի ներթափանցման նվազեցում

Ազդեցությունը. Պաշտպանում է ջրհավաք ավազանները և բարելավում երկարաժամկետ արտադրողականությունը:

5. Անտառին համատեղելի կենսամիջոցներ

- Անտառային ոչ փայտանյութային արտադրանքներ (հատապտուղներ, խոտաբույսեր, սնկեր)
- Համայնքային անտառային տարածքներ՝ վառելիքի անվտանգության համար
- Ավելացված արժեքի վերամշակում (չորամրգեր, բուսական թեյեր)
- Կանանց և երիտասարդների կողմից ղեկավարվող կոոպերատիվներ

Ազդեցությունը. Նվազեցնում է վառելափայտի դուրսբերումը և գյուղական վայրերից արտագաղթը։

Սույն տեղեկատվական նյութը պատրաստվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից՝ «Կանայք հանուն ընդհանուր ապագայի» (WECF) կազմակերպության ֆինանսավորմամբ իրականացվող «Կանանց դերի բարձրացում Հայաստանի պահպանվող տարածքներին սահմանակից բնակավայրերում» ծրագրի շրջանակում։

«Հայ կանայք հանուն առողջության և առողջ
շրջակա միջավայրի» ՀԿ

ՀՀ, Երևան, 0019, Բաղրամյան պող. 24/2,
Հեռ.՝ (+374 10) 52 36 04
Էլ. փոստ՝ officeawhhe@awhhe.am
Վեբ կայք՝ http://www.awhhe.am

Երևան 2026